«Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2022 թվականի ամառային զորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2022 թվականի մարտի ___ N _____ -Ն

ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԶՈՐԱՑՐՈՒՄ

ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ և 25-րդ հոդվածի 1-ին մասերով ու <<Այլընտրանքային ծառայության մասին>> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայտարարել 2022 թվականի ապրիլի 18-ից մինչև հուլիսի 31-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության արական սեռի այն քաղաքացիների շարքային կազմի պարտադիր զինվորական և այլընտրանքային ծառայությունների ամառային զորակոչը (այսուհետ՝ 2022 թվականի ամառային զորակոչ), որոնց 18 տարին լրանում է մինչև 2022 թվականի հունիսի 30-ը ներառյալ, ինչպես նաև այն քաղաքացիների, որոնց շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից նախկինում տրված տարկետումը դադարում է մինչև 2022 թվականի հունիսի 30-ը ներառյալ:
2. 2022 թվականի ամառային զորակոչի շրջանակներում մինչև 2022 թվականի օգոստոսի 30-ը ներառյալ զորացրել օրենքով սահմանված ժամկետում շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային զինվորական ծառայություն անցած զինծառայողներին:
3. Այլընտրանքային աշխատանքային ծառայությունից արձակել սահմանված ժամկետում այլընտրանքային աշխատանքային

ծառայություն անցած ծառայողներին:

4. 2022 թվականի ամառային զորակոչի կազմակերպման նպատակով ստեղծել հանրապետական զորակոչային հանձնաժողով՝ համաձայն N 1 հավելվածի, և մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովներ՝ համաձայն N 2 հավելվածի:
5. Հաստատել կենտրոնական բժշկական հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N 3 հավելվածի:
6. Հայաստանի Հանրապետությանպաշտպանության նախարարին՝

1) <<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո յոթնօրյա ժամկետում ընդունել շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2022 թվականի ամառային զորակոչի անցկացման և օրենքով սահմանված ժամկետում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն կամ այլընտրանքային զինվորական ծառայություն անցած զինծառայողներին զինվորական ծառայությունից արձակելու մասին հրաման՝ դրանում նախատեսելով, որ զինված ուժերի համալրումը շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության կամ այլընտրանքային զինվորական ծառայության ենթակա քաղաքացիներով իրականացվում է 2022 թվականի հունիսի 13-ից մինչև հուլիսի 31-ը ներառյալ, իսկ օրենքով սահմանված ժամկետում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն կամ այլընտրանքային զինվորական ծառայություն անցած զինծառայողների զորացրումն իրականացվում է 2022 թվականի հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 30-ը ներառյալ.

2) 2022 թվականի ամառային զորակոչից խուսափող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների տվյալներն ուղարկել Հայաստանի Հանրապետության ոստիկանության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ, իսկ զորակոչի ավարտից հետո՝ նրանց վերաբերյալ կազմված նյութերը Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի համապատասխան կայազորային քննչական բաժիններ:

3) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հետ համագործակցությամբ ապահովել 2022 թվականի ամառային զորակոչի նախապատրաստական, քաղաքացիների առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության, ինչպես նաև զինված ուժերի համալրման աշխատանքների կազմակերպման ընթացքում կորոնավիրուսի (COVID-19) տարածման և զինված ուժեր ներթափանցման դեպքերի կանխարգելման անհրաժեշտ միջոցառումների իրականացումը:

7. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության նախարարությունների, պետական կառավարման համակարգի այլ մարմինների և կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևերից) ղեկավարներին՝

1) հայտարարված զորակոչին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայություն և նրա տարածքային ստորաբաժանումներ չներկայացած կամ քրեական պատասխանատվության կանչված և հետախուզման մեջ գտնվող զորակոչիկների վերաբերյալ տվյալներ ստանալուց

հետո նրանց նկատմամբ կիրառել աշխատանքային, տնտեսական ու այլ ոլորտներում՝ Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սահմանափակումներ և գտնվելու վայրի մասին անհապաղ իրազեկել իրավասու պետական մարմիններին.

2) իրավասության սահմաններում ապահովել Հայաստանի Հանրապետության զորակոչի ենթակա քաղաքացիների ներկայանալը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայություն և դրա տարածքային ստորաբաժանումներ:

8. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 405-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված հետազոտությունների և պատվաստումների իրականացումն ապահովելու նպատակով հանձնարարել իրավասու ծառայություններին՝ համապատասխան բժշկական հաստատություններին ապահովելու անհրաժեշտ քանակով պատվաստանյութերով, ֆլյուորո (ռենտգեն) և ԷՍԳ ժապավեններով, երևակման նյութերով:
9. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝

1) Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների միջոցով հյուպատոսական հաշվառման կանգնած պարտադիր զինվորական ծառայության զորակոչման ենթակա Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության կողմից էլեկտրոնային եղանակով (Excell ձևաչափով) տրամադրված ցուցակի հիման վրա ծանուցել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայություն և դրա տարածքային ստորաբաժանումներ ներկայանալու համար.

2) աջակցել օտարերկրյա պետություններում գտնվող՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչման ենթակա քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետություն վերադարձին և ապահովել դրա մասին իրազեկումը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության պետին:

10. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին՝

1) ապահովել՝

ա. հասարակական կարգի պահպանությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումների և հանրապետական հավաքակայանի տարածքներում,

բ. զորակոչից խուսափող զորակոչիկների որոնումը Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ու նրանց ներկայանալը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայություն տարածքային ստորաբաժանումներ.

2) զորակոչի ընթացքում զորակոչիկների խմբերը՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Երևան քաղաքի և մարզերի տարածքային ստորաբաժանումներից մինչև հանրապետական հավաքակայան, իսկ հանրապետական հավաքակայանից մինչև Երևանի սահմաններից դուրս փոխադրող ավտոբուսներն ուղեկցումն անվտանգ իրականացնելու համար կցել ճանապարհային ոստիկանության անձնակազմեր:

11. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքում ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ցանկը՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով զորակոչիկների փոխադրումներն իրականացնելու համար:
12. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ զորակոչի ենթակա քաղաքացիների կողմից զորակոչից խուսափելու դեպքերը կանխելու նպատակով զորակոչի ընթացքում ուժեղացնել վերահսկողությունը Հայաստանի Հանրապետության սահմանային հաղորդակցության ուղիներում:
13. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝

1) 2022 թվականի ամառային զորակոչի ընթացքում զորակոչային ռեսուրսներն առավելագույնս օգտագործելու նպատակով՝ փոխադրման, ավարտական քննությունները, դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություններն ավարտել՝

ա. դպրոցներում, ուսումնարաններում, քոլեջներում՝ մինչև 2022 թվականի հունիսի 23-ը,

բ. բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ մինչև 2022 թվականի հունիսի 1-ը.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայությանը տրամադրել մինչև 2022 թվականի հունիսի 30-ը ներառյալ 18 տարին լրացող՝ դպրոցները, ուսումնարանները և քոլեջներն ավարտող, բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննություններին մասնակցելու հայտ ներկայացրած արական սեռի

քաղաքացիների անվանական ցուցակները.

3) մինչև 2022 թվականի հուլիսի 15-ը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության բարձրագույն կամ հետբուհական ուսումնական հաստատություններ ընդունված զորակոչիկների անվանացուցակը՝ ըստ բնակության վայրի հասցեների և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումների.

4) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումների բժշկական հանձնաժողովներում նոր նշանակված բժիշկ-մասնագետների համար, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում պետպատվերի շրջանակներում, կազմակերպել զորակոչիկների ռազմաբժշկական փորձաքննության 35-ժամյա ծրագրով կատարելագործման դասընթացներ:

14. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության մարզպետներին և առաջարկել Երևանի քաղաքապետին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի N 1132-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում օրենքով նախատեսված եզրակացությունների և առաջարկությունների ներկայացման համար մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովի նիստերի անցկացումը:
15. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության վարչապետ **Ն. Փաշինյան**

Հավելված N 1

ՀՀ կառավարության

2022 թվականի մարտ

N _____-Ն որոշման

Կ Ա Զ Մ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՀՀ պաշտպանության նախարար (հանձնաժողովի նախագահ)

ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ (հանձնաժողովի նախագահի տեղակալ)

ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության պետ

ՀՀ ոստիկանության պետ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն

ՀՀ գլխավոր դատախազ (համաձայնությամբ)

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար

ՀՀ առողջապահության նախարար

ՀՀ արտաքին գործերի նախարար

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության զորակոչի վարչության պետ-ծառայության պետի տեղակալ (հանձնաժողովի քարտուղար)

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավար **Ա. Հարությունյան**

Հավելված N 2

ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի

N _____-Ն որոշման

Կ Ա Զ Մ

ՄԱՐԶԱՅԻՆ (ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ) ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

Տարածքային ստորաբաժանումներ	Հանձնաժողովների անդամներ
Երևան	Երևանի քաղաքապետ (հանձնաժողովի նախագահ
Երևանի N 1	Երևան քաղաքի ոստիկանության վարչության պետ
Երևանի N 2	ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության
Երևանի N 3	Երևանի ռազմական ոստիկանության բաժնի պետ
Երևանի N 4	ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման Երևանի N 1, N 2, N 3 և N 4 տարածքային ստորաբա ղեկավարներ
	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առ հարցերի կազմակերպման բաժնի պետ (հանձնաժող
Արագածոտն Արագածոտնի մարզի	Արագածոտնի մարզպետ (հանձնաժողովի նախագա
	Մարզային ոստիկանության վարչության պետ
	ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Էջմիածնի ռազմ ոստիկանության բաժնի Աշտարակի հենակետի պետ
	ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման Արագածոտնի մարզի տարածքային ստորաբաժանմ
	Արագածոտնի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ (հանձնաժող
Արարատ	Արարատի մարզպետ (հանձնաժողովի նախագահ)
Արարատի մարզի	Մարզային ոստիկանության վարչության պետ
	ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Արարատի ռազ ոստիկանության բաժնի պետ
	ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման Արարատի մարզի տարածքային ստորաբաժանման
	Արարատի մարզպետարանի զորահավաքային նախ բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար)
Արմավիր	Արմավիրի մարզպետ (հանձնաժողովի նախագահ)
Արմավիրի մարզի	Մարզային ոստիկանության վարչության պետ
	ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Էջմիածնի ռազմ ոստիկանության բաժնի պետ

	ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման Արմավիրի մարզի տարածքային ստորաբաժանման
	Արմավիրի մարզպետարանի զորահավաքային նախ բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար)
Գեղարքունիք Գեղարքունիքի մարզի	Գեղարքունիքի մարզպետ (հանձնաժողովի նախագա
	Մարզային ոստիկանության վարչության պետ
	ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Մարտունու ռազ ոստիկանության բաժանմունքի պետ
	ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման Գեղարքունիքի մարզի տարածքային ստորաբաժանս
	Գեղարքունիքի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ (հանձնաժողո
Լոռի	Լոռու մարզպետ (հանձնաժողովի նախագահ)
Լոռու մարզի	Մարզային ոստիկանության վարչության պետ
	ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Վանաձորի ռազ ոստիկանության բաժնի պետ
	ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման Լոռու մարզի տարածքային ստորաբաժանման ղեկա
	Լոռու մարզպետարանի զորահավաքային նախապա բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար)
Կոտայք	Կոտայքի մարզպետ (հանձնաժողովի նախագահ)
Կոտայքի մարզի	Մարզային ոստիկանության վարչության պետ
	ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Աբովյանի ռազմ ոստիկանության բաժնի պետ
	ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման Կոտայքի մարզի տարածքային ստորաբաժանման ղ
	Կոտայքի մարզպետարանի տեղական ինքնակառա հանրապետական գործադիր մարմինների հարցերո (հանձնաժողովի քարտուղար)
Շիրակ	Շիրակի մարզպետ (հանձնաժողովի նախագահ)
Շիրակի մարզի	Մարզային ոստիկանության վարչության պետ
	ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Գյումրու ռազմա ոստիկանության բաժանմունքի պետ
	ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման

	Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանման ղեկ
	Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավ հանրապետական գործադիր մարմինների հարցերոս (հանձնաժողովի քարտուղար)
Սյունիք	Սյունիքի մարզպետ (հանձնաժողովի նախագահ)
Սյունիքի մարզի	Մարզային ոստիկանության վարչության պետ
	ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Սիսիանի և Կաա ոստիկանության բաժինների պետեր
	ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման
	Սյունիքի մարզպետարանի հանրապետական գործա տարածքային ստորաբաժանումների գործունեությա բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար)
Վայոց ձոր	Վայոց ձորի մարզպետ (հանձնաժողովի նախագահ)
Վայոց ձորի մարզի	Մարզային ոստիկանության վարչության պետ
	ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Վայքի ռազմակա բաժնի պետ
	ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման Վայոց ձորի մարզի տարածքային ստորաբաժանման
	Վայոց ձորի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ (հանձնաժողո
Տավուշ	Տավուշի մարզպետ (հանձնաժողովի նախագահ)
Տավուշի մարզի	Մարզային ոստիկանության վարչության պետ
	ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Իջևանի ռազմա ոստիկանության բաժնի պետ,
	ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Բերդի ռազմակա բաժնի պետ
	ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման Տավուշի մարզի N 1 և N 2 տարածքային ստորաբաժ ղեկավարներ
	Տավուշի մարզպետարանի զորահավաքային նախա բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար)

Հավելված N 3

ՀՀ կառավարության
2022 թվականի մարտի

N _____-Ն որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Վահե Կորյունի Հակոբյան	- հանձնաժողովի նախագահ
Գարիկ Սմբատի Սարգսյան	- հանձնաժողովի նախագահի տեղակալ (օտոլարինգոլոգ)
Արմեն Վահանի Սաֆարյան	- ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչ
Վահան Նաիրիի Մուկուչյան	- թերապևտ
Գարիկ Գագիկի Մուրադյան	- թերապևտ
Հարություն Վահրամի Ղռմաջյան	- սրտաբան
Գագիկ Սարիբեկի Հակոբյան	- սրտաբան
Արշակ Վարդգեսի Ղազարյան	- նյարդաբան
Հասմիկ Ռաֆայելի Ամրոյան	- նյարդաբան
Սահակ Աշոտի Հակոբյան	- մաշկաբան
Էդուարդ Տիգրանի Վարդանյան	- ուրոլոգ
Դավիթ Գևորգի Փթուկյան	- վիրաբույժ
Թեհրան Ֆրիկի Նավիկյան	- վնասվածքաբան
Լևոն Գագիկի Ներսիսյան	- վնասվածքաբան
Արթուր Լիոնիկի Մինասյան	- օտոլարինգոլոգ
Հրանտ Ալեքսանի Շահինյան	- ակնաբույժ
Եղիշե Ալիկի Բաղդասարյան	- ակնաբույժ
Ռուդոլֆ Կնյազի Սարգսյան	- հոգեբույժ
Լուսինե Անդրանիկի Արզումանյան	- հոգեբույժ
Նարեկ Հովիկի Ջամալյան	- հանձնաժողովի քարտուղար, համակարգչայի օպերատոր

Հայաստանի Հանրապետության Ա. Հարությունյան

վարչապետի աշխատակազմի
ղեկավար